ԵՐԵՍՆԵՐՈՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—3056 ՆԵՐԵՔՇԱԲԹԻ—1—ԴԵԿՏԵՄԲԵՐ—1881 Ն. Տ.—13—ԴԵԿՏԵՄԲԵՐ—1881

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին	Կ. Պոլսոյ	համր.	9	Մէճ.
»	» Գաւառաց	»	11	»
Վեցամս.	» Կ. Պոլսոյ	»	5	»
»	» Գաւառաց	»	6	»

Օտար թղթատարով ղրկուած 50 Ֆրանք

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրշ, երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լինի։

ՄԱՍԻՍ

ԼՐԱԳԻՐ

30 Փարայ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

30 Փարայ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրոյ ամբողջ ծախքը խմբագրութեան վրայ է։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն խմբագիր—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պոլիս Պահճէ-Գաբու Ճէլալ պէյ խան թիւ 31 Մասիսի գրասենեակը։

Ճանբու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

Զտպուած նամակ, յօդուած, ետ ես չեն տրուիր։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռագրական. —Խառն. —Ազգային լուրեր. — Թղթակցութիւն ի Ռուսահայոց։ — Առողջաբանական, Ձմեռ (Դեկտեմբեր, Յունվար, Փետրվար). — Վ. Հիւկօ և Էմիլ Լիթրէ. — Սիմոնի հայոց գաղթականութեան խնդիրը. — Նամակ Բաղէշէն. — Առևտրական.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 10 դեկտ.

Ծերակուտի ժողովին մէջ այսօր վիճաբանութիւն եղաւ Թունուզի արշաւանաց համար խնդրուած ծախուց վըրայ։

Պրոլի դուքսը բացատրութիւններ խնդրեց կառավարութենէն Թունուզի ֆրանսական գրաւման ապագային և կազմակերպութեան վրայ, և Դիրան դըրացնութենէն յառաջ եկած դժուարութիւնները ցոյց տուաւ։ Պրոլի դուքսը կը կարծէ թէ Պարտոյի (Թունուզի Պէյին հետ կնքուած) դաշնագիրը կըրնայ վերաքննուիլ։

Նախարարութեան խորհրդոյ նախագահ Պ. Կամպէթթա՝ պատասխանելով Պրոլի դուքսին՝ ծանոյց թէ յառաջիկայ փետրվար ամսոյն սկիզբը ծրագիր մը պիտի ներկայէ Թունուզի ներկաժամի. թէ կուզէ գլխաւորապէս՝ համաձայնելով տէրութեանց հետ՝ այն բանն ընել Թունուզի պարտուց համար, ինչ որ եղաւ Եգիպտոսի ելմտական վիճակին համար. կը յուսայ որ օտար տէրութիւնք դժուարութիւններ չեն հաներ այս ձեռնարկին դէմ։ «Անգլիա, ըսաւ, ճանչելով Պարտոյի դաշնագիրը, ներելի է յուսալ որ համբերութեամբ և չափաւորութեամբ կրնամք լուծել Թունուզի վերաբերեալ ամեն դժուարութիւնները։

«Պարտոյի դաշնագիրը մեզ կը կապէ մինչև այն օրն, յորում պատուաւոր միջոց մը գտնուի Պէյին նկատմամբ մեր յանձնառած պարտականութենէն ազատելու, առանց պատռելու դաշնագիրն, այլ ճշդելով անոր տրամադրութիւնները։» Պ. Կամպէթթա կըսէ թէ ինք հընարաւոր կը կարծէ Թունուզի վերակազմութիւնն՝ առանց անոր անկախութիւնը ձեռքէն առնլու.

Վիճաբանութեան միջոցին Պ. Կամպէթթա ըսաւ թէ Թունուզի մէջ ֆրանսական զօրաց կորուստն 1,100 հոգիէն աւելի չէ։

Ելմտից նախարար Պ. Ալէն-Թարժէ՝ Պ. Պօշէի պատասխանելով՝ ըսաւ թէ 1881ի ելմտացոյցն ամբողջապէս պիտի վճարէ Թունուզի արշաւանաց ծախքն, և աւելցուց թէ սակաւին 25 միլիոնի յաւելուած մ'ալ պիտի մնայ։

Վիճաբանութիւնը պիտի շարունակէ երկուշաբթի։

Պէրլին 12 դեկտ.

Պիսմարք իշխանին ի պատիւ Օսմանեան յատուկ դեսպանութեան շաբաթ իրիկուն տուած կոչունքին ներկայ էին Պէրլինի բոլոր նշանաւոր անձինքն, և ճաշէն յետոյ տրուած պարահանդէսն ալ բացառապէս շքեղ և գեղեցիկ եղաւ։

Լոնտրա 12 դեկտ.

Այս առաւ Մորնինկ Բոսթ հեռագիր մը կըհրատարակէ ուղղեալ ի Լորտ Կրանվիլէ առ Լորտ Լայընս (դեսպան Անգլիոյ ի Փարիզ) ժխտելու համար Պ. Կամպէթթայի այն խօսքը թէ Անգլիոյ կառավարութիւնն ընդունած է Պարտոյի դաշնագիրը։

Այս առաւօտ հասած հեռագիրք

Փարիզ 12 դեկտ.

Ծերակուտի ժողովը միաձայնութեամբ քուէարկեց Թունուզի համար խնդրուած ծախքը։

Ծովային գործոց նախարարը՝ Շէրպուրկի նաւահանգիստը բարւոքելու համար 40 միլիոն Ֆրանք ծախսելու դիտաւորութիւն ունի։

Պէրլին 12 դեկտ.

Կովերու ժանտախտ երևան ելաւ Սիլեզիոյ մէջ։

Ալեքսանդրիա 12 դեկտ.

Քոլերան երևան ելաւ Էլվիէճի (Կարմիր ծով) բանակատեղին մէջ։

Ուաշինկթըն 12 դեկտ.

Արտաքին գործոց նախարար Պ. Պլէյն հրահանգ ղրկած է Շիլիի և Բէրուի Ամերիկեան դեսպանաց, որպէս զի ջանան, եթէ հնար է, թոյլ չտալ որ Բէրու երկիր տայ Շիլիի, և յորդորեն այդ երկու պետութիւններն որ բացարձակապէս ետ կենան Եւրոպական միջամտութիւն հրաւիրելէ, որ կրնայ կնճռոտել խնդիրը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ'ըսուի թէ Ռուսոյ—Թուրք յանձնախմբին շաբաթ աւուր նըստին մէջ Պ. Պ. Նովիքօֆ և Թէօրնէր պահանջած են որ անպատճառ 12 միլիոն ֆրանք որոշուի տարեկան վճարքին համար, և որոշումն մը չէ կրցեր տրուիլ։

—Այսօր ալ Վագըթ հետագայ հատուածը կը նուիրէ Հայկական խնդրոյն.

«Ինչպէս որ մեր երէկի Տեսութեան մէջ ըսինք։ բնաւ հիմ չկենալով հանդերձ Հայկական խնդիր անուամբ խնդիր մը կը պտըտի ժողովրդեան բերնին մէջ։

«Այս զրոյցին հիմը՝ Պէրլինի վեհաժողովին մէջ Անատոլուի վարչական բարենորոգմանց գործադրութեան համար ցոյց տրուած փափաքն է։

«Բայց Դաշնագրին խմբագրութեան մէջ անտեղի բացատրութիւն մը գործածուած էր՝ Հայաբնակ գաւառներ ըսելով, և այս ալ կեղծաւորներու (Ֆանաթիքներ) մեքենայութեանց դուռ բացաւ։

«Եւրոպիոյ նպատակը բարենորոգումն է, Բ. Դրան ալ փափաքն այդ է, ուստի մէջ տեղը չկայ խընդիր, որ անհամաձայնութեան նիւթ մատակարարէ. բայց միայն դաշնագրին խմբագրութեան մէջ այդ եղած սխալին յենլով, կարգ մը կեղծաւորք և ցնորամիտք խնդրոյ մը կերպարանք տուած են գործին»։

—Մայրաքաղաքիս Քառանթինայի տեսչութիւնը գէշ լուր մ'առաւ Եգիպտոսէն. Մինչդեռ քոլերային անունն այլ ևս չլսուելու վրայ էր, յանկարծ նորէն երևան ելեր է Էլվաճի քառանթինան ըսպասող իսլամ ուխտաւորաց մէջ։ Դեռ մանրամասն տեղեկութիւնք չկան։

—Ասկէց երեք չորս ամիս առաջ մայրաքաղաքէս Ճիտտէ ուխտաւոր տանող Ռուսական մեծ շոգենաւն այս շաբթու վերադարձաւ նոյն ուխտաւորներով, և ըստ որոշման՝ տասն օր քառանթինա պահելու հրաւիրուեցաւ։

— Բ. Դուռը շրջաբերական մը ղրկեց դեսպանատանց, ծանուցանելով այն փոփոխութիւններ զորս մտցուցած է ոգելից ըմպելեաց կանոնագրին մէջ։

— Կը ծանուցուի թէ այս օրերս ամսական մը պիտի բաշխուի բոլոր պաշտօնատանց։

—Վիէննայի լրագրաց մէջ կը կարդանք թէ Բ. Դուռն իւր դեսպանին հրահանգ տուեր է Աւստրիական կառավարութենէն բացատրութիւն խնդրել Պոսնա-Հերսէքի մէջ զինուորագրութիւն մտցնելուն վըրայ. իսկ Աւստրիական կառավարութիւնը բաւորոշ ժխտմամբ մը պատասխաներ է Օսմ. դեսպանին պահանջման։ Ասոր վրայ, Բ. Դուռն իւր առջի գաղափարը ձեռք առեր է, այն է՝ պաշտօնապէս բողոք բառնալ յիշեալ զինուորագրութեան դէմ։ Գերմանիա վերջերս խորհուրդ տուած էր Բ. Դրան ետ կենալ այդպիսի ձեռնարկէ մը, բայց Աւստրիական կառավարութեան պատասխանն յուզած է զԲ. Դուռն, որ ի մտի պիտի ղրկէ եղեր իւր բողոքագիրը բոլոր մեծ տէրութեանց դահլիճներուն։ Թակալաթ Աւստրիական լրագիրը կ'ըսէ թէ Վիէննայի կառավարութիւնը զօրեղապէս պիտի մերժէ Բ. Դրան բողոքը։

— Քաղաքապետութեան որոշմամբ, հացին գինն 5 փարա իջած է այսօրուընէ, և 75 փարայի պիտի վաճառուի։ Մեր ամեն շաբթու Առևտրական Տեսութիւններն աչքէ անցնողք գիտեն թէ արմտեաց գինն առնուազն շաբաթէ մ'ի վեր ինկած էր արդէն. իսկ հացագործք յանժամ ևեթ փոյթ կը ցուցնեն, երբ արմտեաց գնոյն բարձրացում մը կայ։

—Շաբաթ օրն եղեռնադատ ատենին առջև կը դատուէր Պարսիկ մը, որ գործաւորի մը գլխուն զարնելով՝ նորա մահուան պատճառ եղած էր։ Ոճրագործն ամեն ինչ խոստովանած էր նախնական հարցաքննութեանց մէջ, բայց երբ դատարանին առջև վկայից ունկնդրութիւնը կը կատարուէր ըստ օրինի, Պարսիկը «Թանըմամ, պիլմէմ» պոռալով այնքան աղմուկ հանեց, որ անհնար եղաւ վկաները լսել։ Ոճրագործն իւր աղաղակները շարունակեց մինչև իրիկուն, թող չտալով որ դատական գործողութիւնք կատարուին, և հետևաբար, դատն ուրիշ աւուր մը թողուեցաւ։ Ահա տարօրինակ եղանակ մ'ինքնապաշտպանութեան։

—Հաշիւ կը լինի թէ դեկտեմբեր 2/14 գիշերը (վաղն իրիկուն) նոր գիսաւոր մը պիտի երևի, որոյ շրջանն է 8 1/2 տարի, և մեզնէ հեռաւորութիւնն՝ 5 միլիոն քիլոմեթրոյ։

—Ցոյն մեծատունք 130 ոսկի նուիրեցին ձմրան զգեստներ շինուելու համար այն աղքատ աշակերտաց՝ որ Աստուածաբանական դպրոցը մտած են։

—Կ'ըսուի թէ յառաջիկայ մարտ ամսոյ մէջ Սերպիոյ Միլան իշխանը թագաւոր պիտի հրատարակուի։ Պէլկրատի մէջ նոր խորհրդարան մը կը շինուի Սերպիոյ Ազգային ժողովին համար։

— Թունուզի մէջ գտնուող Ֆըրանսացի զօրաց թիւն այժմ 50 հազարի կը հասնի։

— Հռոմի մէջ հրատարակուող լրագրաց միոյն խմբագիրն երկու ամիս բանտարկութեան դատապարտուած է՝ Պապին դէմ նախատական յօդուածներ հրատարակելուն համար։

— Լիվըրբուլի և Նիւ-Եօրքի մէջ տեղ բանող Անգլիական շոգենաւուց միոյն նաւապետն Ատլանտեան Ովկիանոսն 300 անգամ անցած և 60,000 ճանբորդ փոխադըրած է։

— Մեր երէկուան Քաղաքական յօդուածին մէջ Գերմանացւոց գաղթականութեամբ իրենց հայրենիքէն փախչելուն կ'ակնարկէինք։ — Հաշիւ կը լինի թէ միայն ներկայ տարւոյ մէջ աւելի քան 200 հազար Գերմանացիք գաղթած են յԱմերիկա։ Գերմանիոյ երեսփոխանաց ժողովին մէջ երեսփոխան մը յայտարարեց վերջերս թէ Գերմանացիք Միացեալ Նահանգները կը գաղթեն քան զի վստահ են գտնել հոն շատ բան՝ զոր ի զուր կը փնտռեն իրենց հայրենեաց կառավարութենէն։

— Հաշիւ կը լինի թէ Կիպրոսի մէջ կան 230,000 այծ, կամ 1430 այծ 1000 բնակիչ գլուխ։ Գանգատ կայ թէ այս այծեր մեծ վնաս կը հասցնեն ուտելով նորաբոյս տունկերն և ծառերու ճիւղերը։ Նաև այծերուն լորձունքը կը չորցնէ տունկերն որոց կը դպչի։ Այս չարեաց դարման տանելու համար, Կիպրոսի կառավարութիւնը կը խորհի այնպիսի տուրք դնել այծերու վրայ, որ բնակիչք ստիպուին ոչխար պահել փոխանակ այծի, և թոյլ չտալ որ այծերն անտառներու մէջ արածուին։

—Միացեալ Նահանգաց ծովային պաշտօնակալաց մէկ յանձնաժողովն յանձնարարած է կառավարութեան 30 նոր մարտանաւեր շինել, ոմանք պողպատէ, ոմանք փայտէ, բայց շատ արագ քալելու և լաւագոյն թնդանօթներով զինուելու պայմանաւ։ Նաև, 25 հատ ծովառմբի (Թորբիլ) մակոյկներ պիտի շինուին։ Այս նաւային շինութեանց համար 6 1/2 միլիոն Օսմանեան ոսկի ծախք որոշուած է։

—Վերջերս, Սկովտիոյ Ապէրտին քաղաքին մօտ ի Տիւնէքդ, հողագործք կամ աւազակք վրէժխնդրութեան կամ չարագործութեան սարսափելի փորձ մը փորձեցին։ և յաջողեցան՝ հարուստ հողատէր վախճանեալ Լորտ Քրօֆորտի դամբանը մեծ վարպետութեամբ ծակելով և մարմինը գողնալով, որ իրարու մէջ անցուած երեք սընտուկներու մէջ կը հանգչէր։

—Գուշակութիւն յառաջիկայ 1882 տարւոյն համար, զոր գրած է 1660ին Ռուէթիլիոյ Պէնինքազա իտալացի աստղագէտը։

1882 տարւոյն մէջ երկիրս ուղղակի Արուսեակ մոլորակին ազդեցութեան ներքև պիտի լինի։ Հունձքըն առատ պիտի լինի, բայց խաղողն իր սովորական համը չպիտի ունենայ։ Պտուղն առատ՝ բայց ոսական կենդանին նուազ պիտի լինի։ Ձմրան սկիզբը մեղմ պիտի լինի, մէջերը ձիւնոտ, և վերջը խիստ ցուրտ։ Գարունը քաղցր և անձրևոտ պիտի լինի, ամառը խիստ ջերմ, աշնան սկիզբէն սառն երևան պիտի ելնէ։ Տարւոյն այս վերջին եղանակին մէջ երիտասարդաց հիւանդութիւնք և աչքի ցաւ շատ պիտի պատահին, նմանապէս երկրաշարժներ պիտի զգացուին, և կարկուտը շատ վնաս պիտի տայ երկրագործութեան։ Հասակաւոր մարդոց և անասնոց մէջ մեռնողները խիստ շատ պիտի լինին։ Թագաւորաց և բարձր մարդոց ուղևորութիւններ պիտի լինեն։ Կառավարութիւնք ծանր տուրքեր պիտի դնեն ժողովրդոց վրայ, որոց դժգոհութիւնն յեղափոխութեան պիտի յանգի։ Արիւնառուշտ պատերազմունք պիտի լինին և բազմաթիւ թագաւորութիւնք պիտի կործանին։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ գիշեր, Բէրայի Յունաց Սիլլողոսին սովորական նիստը տեղի ունեցաւ, որ մասնաւոր կարևորութիւն մ'ունէր մեր ազգին համար։ Ատեանը բացուեցաւ ժամ 3ին, նախագահութեամբ բժշկապետ Մավրօեէնի էֆէնտիի և ներկայութեամբ հարիւրի չափ անդամոց և ունկնդրաց, որոց մէջ կային նաև կանայք և օրիորդք։ Նախորդ նստին ա[illegible]ժինը կարդացուելէ և վ[illegible]ացուելէ յետոյ, հինգ նոր անդամոց ընտրութիւնը կատարուեցաւ. ասոնց մէջ էր պետական խորհրդոյ անդամ հայազգի Իքիատէս էֆէնտի։ Յետոյ խօսք տրուեցաւ Զմիւռնացի երիտասարդ գրագէտ Պ. Բաբատոպուլոս Քէրամէօսի, որ բեմն ելնելով Յունարէն ընդարձակ ճառ մը կարդաց Հայկական հին գըրականութեան վրայ։ Պատուարժան ատենաբանն, որ գլխաւորաբար Ֆաւստոս Լընոռմանի և Էտուար Տիւլորիէի աղբիւրներուն դիմած լինել կը թուի, հմտալից տեսութիւն մ'ըրաւ մեր ազգային լեզուի, գրականութեան և պատմութեան վրայ, մանաւանդ իրենց նախնական շրջաններուն մէջ։ Խընդիրը քաջածանօթ լինելով մեր ընթերցողաց, չեմք ուզեր մտնել մանրամասնութեանց մէջ, որք սակայն նոր էին Յոյն ունկնդրաց խիստ շատերուն համար։ Պ. Բ. Քէրամէօս երկու ժամու չափ ատենաբանելէ յետոյ, յայտնեց թէ իւր ընտրած նիւթն այնքան ճոխ է, որ չէ կարելի մէկ երեկոյթի մէջ ամբողջացունել զայն. ուստի վերջացուց իւր ընթերցում, ջերմ համակրանք յայտնելով Հայ ազգին համար, որոյ գովեց անցեալն և ներկայն և յուսալից նկատեց ապագայն. այս վերջաբան ջերմ և երկար ծափահարութեամբ ընդունուեցաւ ներկայ գտնուող բոլոր անձերէն։ Նախագահը շնորհակալ եղաւ հայասէր հեղինակին, և Սիլլողոսի երեցագոյն անդամը՝ ճառին երկու կէտերուն վրայ միայն դիտողութիւն ընելով՝ յայտարարեց թէ Պ. Քէրամէօսի ճառը պատիւ կը բերէր ո՛չ միայն իւր անձին, այլ ամբողջ Սիլլողոսին։ Թընկըր Եավէր փաշա և Մինաս Չերազ, Գէորգ Ապտուլլահ և Յովհաննէս Շահինեան էֆէնտիներն, որք ներկայ գտնուող միակ Հայազգիներն էին, Պ. Ատենաբանին ձեռքը սեղմելով՝ իրենց անկեղծ շնորհակալիքն յայտնեցին նմա և խնդրեցին որ հրատարակութեան տայ իւր բանախօսութիւնն ի գիտութիւն բացակայ Յունաց և Հայոց. Պ. Քէրամէօս խոստացաւ զայս. միանգամայն Մավրօեէնի էֆէնտիի հրաւէրանաց վրայ յանձն առաւ շարունակել իւր դասախօսութիւն ուրիշ երկուշաբթի օր մը, զի Սիլլողոսն ամեն երկուշաբթի գիշեր կը գումարի։ Սոյն միջոցին, Յունաց վսեմ. դեսպանին առաջին քարտուղարը նախագահին ներկայացուց զՊ. Մինաս Չերազ իբր Հայոց Պատրիարքին քարտուղար, և Մավրօեէնի էֆէնտի առաջարկեց որ Հայք ալ աշխատակցին Սիլլողոսի գիտական գործին, Ֆռանսերէն բանախօսութիւններ ընելով կարևոր նիւթերու վրայ, և հրաւիրեց զՊ. Մինաս Չերազ որ Սիլլողոսին յառաջիկայ նիստերէն մէկուն մէջ Հայ ազգն Յունաց ծանօթացնող բանախօսութիւն մ'ընէ։ Պ. Մ. Չերազ յայտնեց թէ սիրով պիտի կատարէ երբ ազատ ժամանակ գտնէ։ Նիստը փակուեցաւ ժամ ճիշդ 6ին։

Իշխան Սիմոն Աբամելիք Լազարեվ, որոյ մայրաքաղաքս հասնիլը ծանուցինք երէկ, այսօր կը մեկնի Եգիպտոս երթալու համար, ուր ձմեռն անցունելու մտադիր է։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ի ՌՈՒՍԱՀԱՅՈՑ

(ՄԵՐ ՅԱՏՈՒԿ ԹՂԹԱԿՑԷՆ)

Տփղիս, 16/28 Նոյեմբեր.

Համաձայն լրագիրների հաղորդած տեղեկութեան, երէկ, կիւրակէ օրը, ծանր քայլերով ուղեւորեցայ դէպի այն տեղ, ուր պիտի լինէր "Հայոց բարեգործական» ընդհանուր ժողովը՝ ընկերութեան հըմուտ պաշտօնատար անձինք ընտրելու, մի մեծ ու արժանաւոր գո՛րծ, պաշտօնատար անձինք մի այսպիսի ընկերութեան՝ որ նախատեսում է մի մեծ ասպարէզ գործունէութեան, որ սկսում է իր գոյութիւնը մեծ շրջանակով և մեծ նախագծերով: Զարմանալի յիշողութիւններ և դիտողութիւններ պատեցին ինձ. երբ գնում էի ներկայ լինելու մի այդ օրինակ մեծ գործի: ինչո՞ւ չպէտք է ամեն Հայ քաղաք ունենայ այդ օրինակ ընկերութիւններ՝ որոնք մեծ զարկ և պատճառ կարող են լինել մի ժողովրդեան մտաւոր և նիւթական յառաջդիմութեան. ինչո՞ւ համար մեր համալսարանական երիտասարդութիւնը չպիտի ամենայն տեղ եռանդով գլուխ անցնի այդ տեսակ ձեռնարկութեանց, փոխանակ անգործունէութեամբ և անշարժութեամբ ագէտ և յետադէմ հասարակութեան ազդեցութեան տակ ընկնելու, և ինչո՞ւ չպէտք է մեր հարուստները հոգի չպիտի լինեն այդ տեսակ հաստատութեանց, փոխանակ իրանց փողերը կամ՝ իբրև սրբութիւն պահելու և կամ յիմարաբար վատնելու . . . ինչո՞ւ չպէտք է Տփխիսը, Պօլիսը չունենան այսպիսի մի մի մեծամարմին ընկերութիւններ, որոնք ունենալով նշանաւոր դրամական միջոցներ՝ կարող լինեն օգնութեան ձեռք կարկառելու ամենայն հայի, ո՛վ որ ունի կարօտութիւն, ով որ օգնութեան կարօտութիւն կ'ունենայ, ինչո՞ւ չպէտք է այդ Հայ ազգի կարող մասը չմտածէ իր խեղճ, տառապեալ, աղքատ, և օտարացած եղբայրների մասին, եթէ նորա սրտի մէջ կայ մի կայծ ազգասիրութեան, մարդկութեան, խղճմտանաց . . . : Այո՛, այդ տեսակ հազարաւոր հարցեր արագ արագ միմեանց յետեւից մտնում էին գիտակցութեանս մէջ, գտնելով իրաց պատասխանը անյապաղ. «Հայ կրթեալ երիտասարդը պռոտախօսել գիտէ, և գործելում շատ թոյլ է. Հայ հարուստը իրան Հայ անուանել դեռ չէ սիրում. Հայ հանճարը դեռ իսկ Հայ չէ իր զգացմունքներով՝ իր ուղղութեամբ. Հայ կինը, Հայ աղջիկը դեռ անպէտք է. Հայ ժողովուրդը դեռ խեղճ է. դեռ մի բան անելու անկարող է. իսկ գործողը, իսկ գործել սիրողը, ազգի ցաւերին արձագանք տուողը, դեռ մեզանում շատ փոքր ասպարէզ ունի, և շատ քիչ էլ միջոց, որի հետ և մեծամեծ արգելքներ . . . . :

Այս անհամար հարցերէն այս օրինակ տխուր հարցեր մինը միւսի հետեւից առաջ էին գալիս մտքիս մէջ: Եղանակը մառախլապատ և ամպած էր. ուստի և հոգւոյս մէջ աւելի տխուր զգացմունքներ էին առաջ գալիս, որը ընդհատվում էր ցաւալի ժպիտով և հոգւոց յուզմունքով՝ երբ ականջիս էին հասնում ագէտների և միամիտների դատողութիւնները նոյն օրուայ համար գուշակութեան վերաբերմամբ աշխարհի կատարածի մասին: Այս մտածմունքների տակ գնում էի, երբ պատահեցայ մայրաքաղաքի թերթերից մինի թղթակիցներից մինին, որ ինձ ծանօթ էր, և որը երբ իմացաւ իմ ո՛րտեղ գնալս, ցանկութիւն յայտնեց ինձ ընկերակցելու: Մենք միասին գնացինք: "Այդպիսի մի ընկերութիւն, ես կարծում եմ, ասաց Ռուս թղթակիցը, որ մեծ ընդունելութիւն կը գտնէ, և կարող է ունենալ մեծ դրամական միջոցներ. ես լսել եմ որ այստեղ և առհասարակ կովկասում կան շատ Հայ հարուստներ՝ որոնք չեն զլանալ իրանց մեծ օգնութիւնը այդ նշանաւոր նպատակի համար կազմակերպւող ընկերութեան„: Ի՞նչ էք կարծում, ի՞նչ գումար կը տան մեր ամենասիրելի հարուստները, հարցրի ես, դառնալով դէպ ի նա: "Իւրաքանչիւրը ամենաքիչը մի քանի հազար՝ մի այդպիսի ընկերութեան, և այդ դեռ քիչ կը լինի՝ համեմատելով իրանց միլիոնների հետ, պատասխանեց միամիտ օտարականը„: Ես չեմ զարմանում՝ ձեր ասածի վերայ, վրա բերեցի ես. դուք չէք ճանաչում թէ առհասարակ ի՛նչ անտարբերներ են մեր հարուստները, և ի՛նչ սառնութեան մէջ ընկած մեր ինդիվիդենցիայի անդամները. ուրախ կը լինինք եթէ մեր միլլիոնատէր Միրզոյեանի ընտանիքն երեք անգամ տայ ընկերութեան. գոհ կը լինինք եթէ Ջիմախեանի ընտանիքը երկու անգամ տայ. նոյնպէս և միւսները: "Մի՞թէ„. զարմանքով պատասխանեց օտարականը: Զարմանալու ոչ ինչ չկայ, ասացի ես, այս մի ճշմարտութիւն է, որ ամենքը քեզ կարող են ասել. նոյն իսկ մեր մեծ Հայաբնակ քաղաքները մի քանի հազար տալու յոյսը չեն տուել մեզ, որ տեղ ընկերութիւնը իւր ճիւղերը ունենալու ցանկութիւն ունի. օրինակ, միթէ, դուք կարծում էք որ այս ահագին Տփղիսը, որ տեղ մօտ 45 հազար Հայ կայ, մի որ և է բաւարար օգնութի՞ւն պիտի անէ. միթէ կարծում էք, որ հարուստ Բագուն, Դերբէնդը, Նուխին, Ախալցխան, Երևանը, Նախիջևանը, Նոր-Նախիջևանը, Ղզլարը, Մօզդոկը, իրանց նուէրներով պիտի արժանի լինի՞ն գոնէ փոքրիկ շնորհակալութեան: Սակայն Աստուած տայ որ իմ նախազգացմունքներս սուտ դուրս գան, ասացի ես. վերջացրի խօսքս այս մասին, ըստ որում մենք արդէն տեղ էինք հասել . . .

Զտեսանք ժողովի մէջ այն բազմութիւնը, որը յոյս ունէինք տեսնելու. ներկայ չէր մեր ինտելլիգենցիան ամբողջապէս, ոչ էլ իրանց ազգասէր ցոյց տուող դատարկախօսները, որոնք միշտ խօսքով կարող են պարծենալ. և որովհետև ներկայ լինելով՝ նոքա ևս անդամ պիտի գրուէին, նոքա ո՞վ գիտէ ո՞ր ծակը էին մտել: Ցաւալի էր դիտել թէ ո՛րպէս այդ ազգասէրներից շատերը՝ անախորժ դիմօք առնում էին գրիչ՝ ստորագրելու՝ երբ նոցա հրաւիրում էին գցելու իրանց հինգ րուբլին ընկերութեան գանձանակը, ծիծաղելի էր տեսնել թէ ո՛րպէս շատերը դողդողալով ձեռքերը տանում էին գրպանը: Ողորմելի ազգ, ինչո՞ւ այսպէս անբաղդ ես միշտ:

Ժողովը սկսուեցաւ: Բժիշկ Նաւասարդեան, այդ յարգելի երիտասարդը, որ ընկերութեան հիմնադիրներից, և որ առաջնակարգ տեղերից մին է կարող է բռնել մեր ինտելլիգենցիայի մէջ իր եռանդով, գործունէութեամբ և անկողմնասիրութեամբ, համառօտ կերպով տեղեկացրեց թէ ընկերութեան կանոնադրութիւնը արդէն հաստատուած է, բայց միայն կովկասի համար, (ըստ որում ամբողջ Ռուսաստանի համար ներկայացրած է Ներքին գործոց նախարարին, որից և որոշում չէ ստացուած) և բացատրելով ընկերութեան նպատակը, հրաւիրեց ժողովականներին սկսելու ընկերութեան պաշտօնատար անձանց ընտրելու: Ձայների բազմութեամբ ընդհանուր խորհրդի նախագահ ընտրուեցաւ բժիշկ Շահպարոնեան: Առ այժմ մենք զլացում ենք մեզ խօսելու այդ մարդու մասին. այդ իր ժամանակին: Յետոյ ձեռնարկուեցաւ ընտրելու խորհրդի համար անդամներ, որ թուով ինն պիտի լինին և փոխ-անդամներ (կանդիդատներ) որոնք հինգ պիտի լինին թուով. փոխ-անդամների հարցը անորոշ մնաց, շնորհիւ կանոնադրութեան անորոշ կազմութեան. մենք որ ներկայ էինք կանոնագրին կազմութեան ժամանակ, այժմեանից հարկաւոր ենք համարում նըկատել, որ այդ կանոնադրութիւնը շատ անյարմարութիւններ պիտի յառաջ բերէ, իր վատ և անորոշ կազմութեան համար, որ իւր ժամանակին ուշքի չ'առնուեցաւ: Ընտրութեանց վերաբերութեամբ պէտք է ասել, որ առանձին ուշադրութիւն էին դարձնում մեր հարուստներին ընտրելու, գուցէ այս նպատակով որ կարծում էին թէ նոքա իրանց հարստութիւնը կը կտակեն. ընտրութիւնները մասամբ անյաջող եղան. ընտրուեցան մեր խորհրդի ինն անդամները. ցանկալի էր որ լինէին այդ տեղ մի քանի յայտնի եռանդոտ և գործունեայ անձինք: Քուէարկութեամբ խորհրդի անդամ ընտրուեցան՝ ձայների բազմութեան կարգով հետևեալները. Ժէնէրալ Դիմիտրի Տէր-Աստուածատուրեան. Աղէքսանդր Մանթաշեան, Նաւասարդեան, Սունդուկեան, Յովհաննէս Ջիմախեան, Աղէքսանդր Մելիք-Ազարեան, Աղէքսանդր Անանեան, Նիկողայոս Խոսրովեան, Ներսէս Ալթաբեգեան: Այդտեղ հանդէս են գալիս մեծաւ մասամբ նոր անձինք, որոնց գործունէութեան չափի և աստիճանի մասին խօսելը մանրամասնաբար թողնենք ապագային, և այսքանով առ այժմ այս մասին բաւական ենք համարում: Խորհրդի անդամների ընտրութեամբ և վերջացաւ ժողովը: Դուրս գալիս օտարական թղթակիցը շտապեց հարցնել. "Միթէ ձեր տիկինները և օրիորդները այդպիսի տեղերում չե՞ն մասնակցում, կամ չե՞ն ուզում մասնակցել. այդ մասին պատասխանը շատ տխրալի կը լինի ասացի ես: այն մի քանի կանայք, որ այն տեղ նստած էին, պէտք է ասել որ միայն հետաքրքրութեան համար եկած էին և ուրիշ ոչինչ —. Հայ տիկինները արտաքուստ միայն եւրոպականացած են և ներքուստ ոչինչով չեն զանազանվում իրանց նախորդներից. ոչ մի հասարակական գործի մէջ մեր իգական սեռը մասնակցելու կարողութիւն չունի դեռ. երկար ժամանակ է հարկաւոր որպէս զի նոքա իրանց պարտքը հասկանան:

Ցաւում եմ յոյժ, որ Ձեր հասարակութեան այդ մեծ մասը—կանայք, այդ դրութեան մէջ են, ասաց ընկերակիցս, և մի քիչ խօսելուց յետոյ մնաս բարեաւ ասաց: Ես աւելի տխուր զգացմունքներով դարձայ, անիծելով "Հայի անտարբերութիւնը և անգործունէութիւնը„:

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ՁՄԵՌ

ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՅՈՒՆՎԱՐ, ՓԵՏՐՎԱՐ

Հիպոկրատ ըսած է. «Ամառը՝ ձմրան մէջ սաստկացած հիւանդութիւնները կ'առողջացնէ, ձմեռն ալ՝ ամրան մէջ սկսած հիւանդութիւնները կ'ըրընացնէ: Աշունը՝ գարնան հիւանդութիւնները կը վանէ, գարունն ալ աշնան հիւանդութիւնները:»

Ձմեռը տկար անձանց համար գէշ է, իսկ քաջառողջներու՝ աղէկ, նոյնպէս ծերոց վնասակար, բայց երիտասարդաց յարմար է: Այս եղանակը՝ հարբուխներու, կուրծքի հիւանդութիւններու և յօդացաւերու ատենն է, նա մանաւանդ եթէ օդն ալ խոնաւ ըլլայ. ցրտէ խորշոմած մորթը չկրնար իր պաշտօնը աղէկ կատարել. ձմրան ատեն, քիթի, կոկորդի և շնչափողերու ներսի թաղանթները դիւրաւ կը բորբոքին, վասն որոյ փափկակազմ անձինք, տարիքի և հիւանդութեանց առթիւ տկարացածներ և նոր ապաքինածներ՝ պէտք եղած առողջապահական զգուշութիւնները ձեռքէ ձգելու չեն: Հուժկու և կորովի անձինք ևեթ կրնան առ ոչինչ գրել ձմրան սաստկութիւնը, այսպիսիներու համար չափազանց ըզգուշութիւնը վնաս կը բերէ և մինչև իսկ կրնայ զանոնք հիւանդութեանց ընդունակ անել:

Իսկ անզօր և նիհար մարդիկ՝ պարտին այլ և այլ զգուշութիւններ ձեռք առնուլ, որչափ որ իրենց նիւթական վիճակը կը ներէ, կը ներէ կ'ըսեմ, ըստ որում շատեր՝ չքաւորութեան պատճառաւ իրենց առողջութեանը համար պէտք եղած անհրաժեշտ դարմաններն անգամ կ'ստիպուին զանց ընել: Զոր օրինակ. Ի՞նչ բանի կը ծառայէ Կ. Պոլսոյ խեղճ բեռնակրի մը ըսել. «Բարեկա՛մ, դուք յօդացաւի ընդունակ էք, խոնաւ և ցուրտ օդը ձեզի վնասակար է, գետնայարկը ձեզի աղէկ չէ, պէտք է ձեզ օդաւէտ, բարձր և չոր տեղ մը բնակիլ» կամ ի՞նչ օգուտ ունի, եթէ օրը հազիւ մէկ երկու ղրուշ վաստկող գործաւոր տղու մը ըսուի. «Տղա՛ս, քու շնչառութիւնդ կարճ է. վերնայարկը ելնել իջնալ քեզի շատ գէշ կուգայ, առաջին դստիկոնը բնակէ՛. շատ մի յոգնիր և ստէպ հովասուն տեղեր պտըտէ:»

Արդարև ասոնք աղքատի մը համար անկարելի բաներ են, բայց և այնպէս պէտք չէ երբէք յուսահատիլ, որովհետև, ինչպէս որ բնութեան ամեն գործոց մէջ, նոյնպէս ալ ասոր մէջ հիանալի ներդաշնակութիւն մը կը տեսնուի. եթէ աղքատները բաղդին անյաջողութենէն և դարմանց պակասութենէն կը նեղուին, թերևս հարուստներն աւելի կը նեղուին չափազանց ըզգուշութիւններով՝ որ զանոնք կը տկարացնեն և ուժաթափ կ'ընեն. վերջապէս, թէև առողջաբանական զգուշութիւնները միմիայն կարողութեան տէր անձանց դիւրամատչելի կը կարծուին, այսու ամենայնիւ ամեն կարգի և ամեն աստիճանի անձինք կրնան անկից օգուտ քաղել, եթէ իրենց կարողութեան ներածին չափ զգուշութիւններ ձեռք առնուն:

Թոքախտի ընդունակ եղող հարուստ և ունևոր անձանց կրնայ ըսուիլ. «Ձեր կուրծքը փափուկ է, և ձմրան սաստկութենէն կրնայ վնասուիլ. ասոր համար պէտք է որ օր մը յառաջ տաք կլիմայներ երթաք, օրինակի աղագաւ, Եգիպտոս, Ճէզայիր, ևն., ու ձմեռը հոն անցունէք: Սակայն այսպիսի դարմաններ հիւանդութիւնը նոր սկսած ատեն ևեթ կրնան օգտակար ըլլալ. այս մասին թէպէտ և շատ մը միջոցներ կան գործածելիք, բայց ամենէն յարմար և օգտակարը օդափոխութիւնն ըլլալ կը կարծուի:

Իսկ չքաւոր և աղքատ մարդոց պէտք է ըսել. «Զգոյշ լերո՛ւք ցուրտի և խոնաւութեան հարուածոց, նոյնպէս հեռի կեցէ՛ք չափէն աւելի զգուշութիւններէ. թեթև հիւանդութիւնները բանի տեղ մի՛ դնէք. օդէ և մարմնական կրթութենէ մի՛ զրկուիք. ֆանէլա հագուեցէ՛ք. խիստ տաք և գիշեր ցերեկ շնչառութեամբ օդը աւրուած սենեակներու մէջ մի՛ պառկիք, այլ զով և առանց կրակի սենեկի մէջ պառկեցէ՛ք

Պէտք է կազմը զօրացնել օդը աղէկ եղած ատեն զանոնք պտըտցնել եթէ անոնց կուրծքէն վախնալիք բան մը չըլլայ. Թեթև հարբուխ մը չէ պարտ այնչափ զարհուրիլ, ըստ որում ասի՝ լոյսէ զրկուելէ և մեղկ ու քնքուշ կեանք վարելէ նուազ դառն է. Նորածին տղայք և կաթնակերք ամեն օր օդ առնելու են, քանզի օդը՝ անոնց համար ամոքիչ է ցաւոց և հիւանդութեանց. տարւոյն մէջ վեց օր չկայ, յորում նոքա օդին խառնակութեանը առթիւ շրջագայելէ բոլորովին զրկուին և տան մէջ փակուած մնան:

Նորահաս և փափկասուն տիկնայք, ընդ երկար պարապ կենալէ պարտին զգուշանալ, վասն զի ասով թէ՛ իրենց ունեցած փառքի ուժն ալ կ'անհետանայ և թէ՛ մարմիննին ամեն տեսակ ճնշմանց և ազդեցութեանց ենթակայ կ'ըլլայ. այս կերպ կենցաղավարութիւնը բուն իսկ հիւանդութենէ աւելի դառն և անտանելի է, զոյգն անհանգստութիւն մը հիւանդութեան տեղ դնելով, պէտք չէ անմիջապէս բժշկի դիմել. լաւ է քիչ մը ցաւոց դէմ մաքառիլ, քան միշտ և անընդհատ անոնց տեղի տալ: Հիւանդութեանց գլխաւոր պատճառներէն մին ալ մտաց և սրտի անհանգստութիւնն է, որոյ վասն ճարտար և իմաստուն բժիշկներ իրենց հիւանդներուն պէտք եղած նիւթական դեղերը մատուցնելնուն չափ բարոյական դեղերն ալ կը խորհին, այսինքն՝ համոզիչ և ազդու յորդորներով անոնց մտաց անդորրութիւն և սրտին մխիթարութիւն կը պարգևեն, ու ա՛յն աստիճան վստահութիւննին կը վաստկին՝ որ աչերնին դուռը կը մնայ թէ ե՞րբ պիտի այցելեն. և գուցէ այս կերպ բարոյական դեղ ու դարմաններ նիւթական դեղերէն նուազ օգտակար չեն հիւանդաց: Ընդհակառակն, այնպիսի բժիշկներ ալ կը գտնուին, որք իրենց դիմողներն առանց ուշի ուշով զննելու և սրտի մօտ քննելու՝ քանի մը վեր ի վերոյ հարցումներով կը գոհանան և շուտ մը կ'սկսին դեղագիր գրել. այսպիսեաց համար շատ յարմար կուգայ ըսել. «Բժիշկ բժշկեա զանձն քո»:

Առենոք երևելի քաղաքագէտ մ'ըսած է. «Աղէ՛ բերէք ինծի քաղաքագիտական յաջող լուրեր. ահա և ես պատրաստ եմ պարգևել ձեզ անբաւ գանձեր:» Նոյնպէս եթէ բժիշկը կը յաջողի հիւանդին սիրտն ու միտքը հանդարտեցնել, անոր առողջութիւն և կեանք պարգևած կ'ըլլայ. բայց դժբաղդաբար քանի՛ հիւանդներ ունայն վախերու և մտատանջութեանց զոհ գացած են . . . :

Ամեն մարդ իր անձնական փորձն (իտիօզինքրազի) պարտի ճանաչել. Գ. Տը Ցոննէ կը պատմէ թէ քաջառողջ մարդ մը տեսել է, որուն համար ամեն տեսակ պանիր իբրև թոյն կ'ազդէ եղեր, ասի շատ ուշադրութեան արժանի կէտ մ'է, վասն զի երբեմն կը պատահի որ հիւանդ մը բժշկին պատուէրին հակառակ վնասակար սեպուած բան մը կ'ուտէ և չվնասուելէ զատ օգուտ ալ կը տեսնէ. ասոր պատճառը ուրիշ բան չկրնար ըլլալ, բայց եթէ իր անձնական փորձն հետևանքը:

Ուտելեաց և ըմպելեաց մասին պէտք եղած զգուշութեանց առաջինը չափազանց կերուխումէ հրաժարիլն է. եթէ Շարայի պէս շատակերք առողջապահական կանոններն արհամարհեն, անմիջապէս կը պատժուին բուն իսկ իրենց ստամոքսէն, որ աւելորդ բեռը կրկին իրենց վերադարձնելով՝ գոգցես կուզէ իմացնել թէ «առողջաբանական կանոնաց դէմ գործողն անպատիժ չմնար:»

Եթէ գինւոյ տրամադիր էք, առտուն կանուխ ելէք և շուտով գործի սկսեցէք նոթի փորանց և ձեր անձը յոգնեցուցէք. իսկ ընդհակառակն՝ տըկարք և վատուժք պարտին ուշ ելնել և շատ չյոգնիլ: Մարմնոյ ճշմարիտ թոյները ոգելից ըմպելիքներն են, որք ուղղակի արեան մէջ խառնուելով՝ անոր միջոցաւ բոլոր անդամները կը հարուածեն, ինչպէս են ուղեղը, սիրտը, թոքը ևն.:

Ոգելից ըմպելեաց վնասակարութեանը վերայ հատորներով գիրքեր գրուած և Եւրոպայի մանաւանդ Ամերիկայի մէջ այլ և այլ բարենպատակ ընկերութիւններ կազմուած են անոնց տարածումը արգիլելու նպատակաւ. բայց դժբաղդաբար փափաքուածին չափ չեն յաջողած:

Եւ հիմա աստ՝ ի Կ. Պոլիս՝ մինչև ամեն կարգի վաճառականք, արհեստաւորք և գործաւորք ամենն ալ կը գանգատին ժամանակի անձկութեանց համար, անդին Բօսֆորեան պաճարքէն (գի- [illegible] կը լսեմ, որ թոթով լեզուով կը պոռայ կը կանչէ և գայթ ի գայթ կը քալէ սալայատակին վերայ. այս մասին խոնարհաբար հրաւէր կը կարդամ հըմուտ գրչաց և քարոզիչ Ս. Հարց, գրել և քարոզել ազդուապէս ի լուր հասարակաց:

Դ. Ց. ՊԱԼԵԱՆ

Վ. ՀԻՒԿՕ
ԵՒ
ԷՄԻԼ ԼԻԹՐԷ

(Շարունակութիւն)

Գանք Էմիլ Լիթրէին. նա վիքթօր Հիւկոյէ քանի մ'ամիս յառաջ ծնած է: Մինչդեռ Հիւկօ գերբնականի գագաթները կը մագլցէր, քնարերգութեան հովին կուտար ինքզինքը և իր մարգարէի յուզմունքը կը չափազանցէր, միւսը մէթօտ մը կը փնտռէր եռանդով՝ և կարող կ'ըլլար իր իմացականութեան կանոն դ[illegible] ցարձակապէս փո[illegible] թիւններն ընդուն[illegible] կառակորդութիւ[illegible] բացորոշ կերպով չէ հաստատուած: Այս երկու մարդերը քով քով ընթացած են՝ առանց իրար դպչելու, և իմացական տեսակէտով պիտի չափենք իրենց գործերը՝ այս դարու վերջին վրայ ամեն մէկին ըրած ներգործութիւնն ուսումնասիրելով:

Լիթրէ՝ Օգիւսթ Գօնթ ճանչցեր էր կարծեմ 1845 ին՝ և արդէն մաթեմաթիքէ սկսեալ մինչև ֆիզիք, բնախօսութենէ մինչև բժշկութիւն, պատմութենէ մինչև լեզուագիտութիւն սորված ըլլալուն՝ ընտիր կերպով պատրաստուած էր։ Օկիւսթ Գոնթ անոր թողած մեթոդը առաւ և այն առնէն սկսելով իր իմացականութիւնը հաստատ հիմ մը գտաւ, դրական կերպադիրն ընդունեցաւ, կերպադիր՝ որ գիտական դասաւորութեան մը՝ և մարդկային բարեշրջման ճիշդ զննութեան մը վրայ կ'կայանայ․ բարեշրջում՝ որ երեք վիճակներու կը բաժնուի, աստուածաբանական, բնազանցական և դրական վիճակներ։

Բայց Լիթրէ, որ սոյն վարդապետութեան ստեղծիչը չէր, նոյնին կիրառութեան մէջ այնպիսի մեծ ուղղամտութիւն և տրամաբանութիւն մը կը բերէր որ մեծ ներգործութիւն մը ունեցաւ։ Լիթրէ այդ կերպադիրը հաստատեց՝ զայն Օկիւսթ Գոնթի տեսիլներէ զտելով և բոլորովին գիտական կանոններու վերածելով։ Ըստ Լիթրէի՝ անծանօթը պէտք է վերապահել, զԱստուած՝ չուրանար նա, այլ մեկուսի կը թողու և չհետազօտեր։ Ենթադրութենէ այնքան կը վախնայ որ կը մերժէ ամեն տեսիլներն որոնց մէջ կրնայ մտնել․ օրինակի համար, Տարվինի բարեշրջական դրութիւնը երբէք չընդունեցաւ լիովին, վասն զի ծանօթ եղելութիւններն անոր բացարձակ ճշդութիւնը չեն փաստեր։ Այսքանը բաւական է զ. Լիթրէի և իր մեթոդին գաղափարը տալու։

Անկէ զատ այդ մեթոդը կրնայ իր արդիւնքներէն դատուիլ․ այս տեղ չեմ կարող Լիթրէի գիտական և փիլիսոփայական ընդարձակ գործերուն վրայ խօսիլ, ինչպէս են իր Հիպոքրատի թարգմանութիւնը, բնախօսութեան, բժշկութեան, պատմութեան, լեզուի գիտութեան, փիլիսոփայութեան, քաղաքականութեան, և այլն՝ վրայ գրած բազմաթիւ երկերը․ բաւական է ինձ իր բառգիրքը յիշել, հսկայական յիշատակարան՝ զոր միայն դրական մեթոդը կրնար կանգնել․ այդ մեթոդը նոյն բառգրքին մէջ ֆրանսերէն լեզուի կատարեալ մէկ պատմութիւնն և լեզուի պատճառաբանեալ փիլիսոփայութիւն մը կ'ընծայէ մեզ։ Անոր հաստատ հիմը զննուած եղելութիւններն են։ Լիթրէ բառերու ծագումին կը դիմէ և Ֆրանսայի գրագէտներէ քաղուած բառերու մէջ անոնց նշանակութեան արձանագրութիւնը կը շինէ։ Այս գործին մէջ դրականութեան վճռական կիրառութիւն մը կայ, ինչպէս նաև օրինակ մը այն մեծ գործերու՝ որոնք վաղը պիտի կատարուին դարձեալ դրական կերպադրին շնորհիւ, որ արդի գիտութեանց այնքան պարզ և հզօր գործն է։

Տարակոյս չկայ, այդ գործիքը՝ բոլոր մեր թուականին ահագին շարժում մը տուաւ։ Առած ճամբանիս դեռ չենք նշմարեր, չենք տեսներ տակաւին թէ դրական մեթոդը սակաւ առ սակաւ մեր մարդկային գործունէութիւնը բոլորովին գրաւած է․ Եւս քան զեւս քաղաքականութեան մէջ կիրառութիւն կը գտնէ անի և Ֆրանսան անով պիտի վերաշինուի՝ եթէ մարդերու տխմարութիւնն ու ախորժանքը (կռ—) թոյլ տան։ Գրականութեան մէջ կը փայլի այն բնապաշտական ձևով զոր շատեր անտես կ'ուզեն ընել։ Այս առթիւ՝ Լիթրէի բառարանին մէջ կը նշանակեմ Ներնակայութիւն բառը․

—Կարողութիւն՝ որ ունինք աշխուժիւ յիշելու և կերպիւ իւիք տեսնելու այն առարկաները՝ որ ալ աչքերնուս առջև չեն գտնուիր։ —

Այս երեք տողերը բոլոր ընդունուած դրական գաղափարները կը շփոթեն, քնարերգութեան կամ կատակերգի ստութեան և կեղծիքին յաջորդելով․ և այս է մեր ալ փափաքն ու նպատակը, եղելութիւնները իբրև հիմ՝ և իրերու ու էակներու ճշմարտութիւնը իբրև միակ զննութեան առարկայ ունենալ։

Այլ որ աւելի բարեբաղդն է, Լիթրէի հիանալի իմացականութիւնը մարդուն և անբիծ բարոյականութեան մը հետ միացած է․ Լիթրէ՝ իմաստուն մ'էր թէ՛ մտապէս և թէ՛ բարոյապէս, և հեշտասէրն Սէնթ-Պէօվ գիտութեան մէջ փակուող այս մենակեացին վրայ խօսելով կ'ըսէր, — Ի՛նչ ըսեմ, բարեկամք, Լիթրէն բանի մը կարօտ չէ և ամեն բանի կարող։ Այս բարձր և անբիծ առաքինութիւնը՝ շատ անգամ մեծ պատասխան մ'եղած է տեսակ մը յարձակումներու դէմ։ Այս է մեր վարպետն եղող մարդուն գործը և բարոյականը, որոնք ըստ բաւականին կը փաստեն թէ քնարերգական յիմարութիւնն անհրաժեշտ չէ պարկեշտ մարդ մ'ըլլալու համար։

ԷՄԻԼ ԶՕԼԱ.

([illegible])

ՍԻՆՈԴԻ ՀԱՅՈՑ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

. . . Խմբագիր Տէր,

Մասեաց 3045 թուով Սինոդի Ղըյլըճ գիւղի գաղթականութեան նկատմամբ Ձեր խմբագրական խորհրդածութեամբ փոքրիկ հարուած մ'ալ մեզ ուղղած էք, երբ կ'ըսէք «Տրապիզոնի առաջնորդն անհոգ գտնուած է այս խնդրոյ մէջ»։ (1) Որպէս զի բարեմիտ ընթերցողաց գայթակղութեան տեղի չտամք, խնդրեմ որ համառօտ գրութիւնս հրատարակել բարեհաճիք անկողմնակալութեամբ։

Տրապիզոնի առաջնորդը գաղթականութեան լուրն առնելուն պէս՝ իմացուց առ Պատրիարքարանի, և Ղըյլըճ գիւղի Ս. Եկեղեցին Վրացի գաղթականաց ձեռք անցնիլը ցաւօք յայտնեց և առ այս Ազգ. Պատրիարքարանի ուշադրութիւնը հրաւիրեց։

Տրապիզոնի առաջնորդն Հայ գաղթականաց թշուառ վիճակը ականատես և քաջ տեղեակ գոլով՝ նկարագրեց Ազգ. Պատրիարքարանի և Նորա անմիջական օգնութիւնը խնդրել։

Տրապիզոնի առաջնորդը ի դէպ առթի չդադարեցաւ թէ՛ կուսակալութեան և թէ Սինոդի կառավարչութեան գութն ու պաշտպանութիւնը հայցել, և այս մասին թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս իւր օգնութիւնը չզլացաւ, թշուառաց խղճին կը թողու խօսիլ։

Տրապիզոնի առաջնորդն անհոգ եւեթ գտնուեցաւ Ասատուր քահանայի փառասիրութեանը չզոհել իւր դժբաղդ կարգակիցը, զոր հեռագրաւ կը խնդրէ բռնութեամբ վերադարձնել ի Սինոդ(2)։

Մեք որ առաջնորդական պաշտօնիս մէջ պարտքերնիս կատարած եմք, զայդ վկայել Ազգ. Պատրիարքարանի Դիւանատան կը թողումք։

Մնամք . . .

Առաջնորդ Պոնտոսեան վիճակաց
ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍԿ. ՆԱԶԱՐԵԱՆՑ
Տրապիզոն, 25 նոյ. 1881.

---

(1) Սինոդ որչափ մերձակայ է Տրապիզոնի՝ նոյնչափ ալ Կ. Պոլսոյ։

(2) Անշուշտ Ասատուր քահանայն իւր տեղեկագրին մէջ զմեզ անհոգ անուանած է, որոյ յենլով զմեզ հարուածած էք։

ՆԱՄԱԿ ԲԱՂԷՇԷՆ

Բաղէշ, 16 նոյ. 1881

Ազգային վիճակ. — Այժմ քաղաքիս մէջ զազգ ներկայացնող ոչ և է ժողով, կղեր կամ անհատ չկայ․ Ազգ. ժողովներ լուծուած, Առաջնորդարանի դուռ գոց, և ժողովրդն ազգայնութենէ կղզիացեալ դրից մէջ կը գտնուի։ Թէև Սըրուանձտեանց Գարեգին հայր սուրբն տեղս է, բայց նա՝ իւր վերագոյն պաշտօնի համար՝ [illegible] տեղեր բնակելով, ազգի ցաւերը դարմանելու, կամ Ազգ. կենսական խնդրոց նայելու ժամանակ չունի։ Խոհուն Պատրիարքարանը խոհուն հայր սուրբն հոս ղրկած է՝ խաղաղութիւնը վերահաստատելու, ազգի մէջ միաբանութիւն տնկելու, մինչդեռ Բաղիշոյ ազգութիւնը ձեռքէ ելած է արդէն։ Անգլիականութեան հանրագիրը՝ միայն քաղաքիս մէջ 500 ստորագրութիւնն անցաւ. ան ալ ընտրողականութեամբ․ որովհետև աղքատ կամ անհաւատարիմ մարդիկ չեն ընդունուիր նոյն Ս. փարախի մէջ։ Տիգրանակերտու հանրածանօթ Պօյաճեան պատուելին խոստացած է Անգլիական եպիսկոպոս և վարժապետ ղրկել սոյն ընտրեալ հօտին, որք արդէն վաղուց իմացուցած են իրենց Պոլսոյ պատուելիականներուն, որ Տիգրանակերտ երթան և անգլիականութիւնն հաստատապէս ընդունելոց յապահովութիւն, հակառակ պարագայից մէջ 500 լիրա գալիք 2 անձանց տուգանք վճարելու պայմանադրութեամբ, առօք փառօք տեղս պիտի բերեն նոյն առաքեալներն։ Գիւղացիք արդէն երկնային մխիթարանք կը կարծեն սոյն գործը․ հետևաբար ամեն օր լուր և նուիրակ կը տեղայ սորա պարագլուխներուն, որոնց նայելով, Հայ անունը ճիշդ այն բանը դարձել է գիւղացւոց աչքին թէ՝ «ո՞րբ իցէ, զի եղից ի թանձրագանգաղ ձանձրալի մորմիոյս»։ Որդարեւ մեծ է Բաղիշոյ Հայութեան առջև բացուած այս կորստեան վիհն, որն որ յառաջ եկաւ ժողովրդային կամքը բռնաբարուելէ․ և այժմ ալ նորա առաջն առնելու համար մեր Կեդր. Վարչութիւնն ելաւ տեղս ղրկեց՝ իւր անցելոյն մէջ ոչ նուազ փայլուն միապետական կղեր մը . . .։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Կ. ՊՈԼԻՍ 23—30 ՆՈՅԵՄԲԵՐ 1881

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

[illegible] զգուշութիւն ցոյց կուտան գնոց բարձրացման մը սպասելով, մինչդեռ գնողք կը վարանին։ Սթոքնիս 6,500 հակ է։ Ի Լիվրբուլ, 408 հակ վաճառուած է, 20 1/2 բէնսէն ստորին և 22 բէնսէն ֆէր օվէրէժ (լաւ միջին) տեսակ։ առուտուրը բանուկ է հոն։

ԱՓԻՈՆ.—10 կողով Մալաթիա վաճառեցաւ 223—225 ղրուշն։ Տեղւոյս հրապարակն յոյժ բանուկ վիճակի մէջ է։ Ընտիր տեսակներ, որպիսի են Մալաթիա և Եւդոկիա, շատ կ'ուզուին, մինչդեռ ստորին տեսակաց երեսը նայող չկայ։ Գոնեայի և Գարահիսարի գիներն են 190—194 ղրուշ։ Սթոքնիս կը հասնի 230 կողովի։ Ի Լիվրբուլ, 16 1/2 շիլինկ կը տրուի Մալաթիային։

ԲՈՒՐԴ.—Շաբթուս մէջ, եօթնէն յանձնուելու պայմանաւ 20,000 օխա Գասաբ Պաշը վաճառեցաւ 9 1/2 ղրուշէն առաջին տեսակի համար, 7 1/2 Բ. տեսակ, և 5 3/4 Գ. տեսակ։ Ընդհանրապէս կ'ենթադրուի թէ առ այժմ ուրիշ ապրանք չկրնար գնուիլ այդ գնոց վրայ օխային 10 փարա չաւելցուցած։ Ի Լիվրբուլ, Գասաբ պաշըի գիները բարձրացան լիպրային 1/4—1/2 բէնս, և հրապարակն ամուր է հոն։

ԳԱԶԻ ԽԷԺ.—Իբր 3,000 օխա վաճառեցաւ այս շաբթու 29—30 ղրուշէն բնական սալի. [illegible] 1/2—14 1/2 ղրուշ դեղին, և 7 1/2 [illegible] ստորին. Մեր հրապարակը բանուկ [illegible] տեսակներ շատ կ'ուզուին։ Սթոքխս։

—Շաբթու մէջ վաճառեցաւ 100 պարկ, յորմէ 50 պարկը Զորում, 5 1/2 ղրուշէն․ 40 պարկն ընտիր Էնկիւրիւ, 6 1/2 ղրուշէն․ և 10 պարկը Կեսարիա, 6 7/8 ղրուշէն, Հրապարակն՝ հանդարտ, գիներն ամուր։ Սթոք՝ 1,500 պարկ։

ԳԻՏՈՐ.—Քիչ կը գտնուի մեր հրապարակի վրայ, և չգոյ, որով գործողութիւնք սահմանափակ են։ Գիներն են 6 1/4 ղրուշ սեւ, 5 3/4 սպիտակ։

ԲԱՄՊԱԿ.—Տեղական սպառման համար, այս շաբթու 50 հակք առնուեցան․ ասոնցմէ 30 հակ Ադանա, 7 3/4 ղրուշէն, և 20 հակ Զմիւռնիա՝ 8 1/4 ղրուշէն։ Սկսած է գալ, և գնողներ կը տեսնուին հրապարակին վրայ։ Ամուր է, և դէպի վեր կը միտի։

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

ՇԱՔԱՐ.—Եկաւ 5,005 պարկ Թրիէստէ։ Վաճառեցաւ 3 500 պարկ։ Սթոք, 6,000 պարկ։ Միշտ գալով, գիներն ինկած են, և աւելի պիտի իյնան, որովհետև տեղացի խանութպանք շատ ունին։

ԽԱՀՈՒԷ.—Եկաւ 500 պարկ։ Վաճառեցաւ 400 պարկ։ Սթոք, 5,400 պարկ։ Անշարժ․ միտումը դէպ ի վար։ Եւրոպական հրապարակք տկար են։

ԲՐԻՆՁ.—Չեկաւ։ Վաճառմունք, 500 պարկ Հնդիկ և 300 պարկ Իտալական։ Սթոք, 4 000 պարկ Հնդիկ, և 1 000 պարկ Իտալական։ Անշարժ։ Իտալականը կ'իյնայ։ Անգլիոյ լուրեր բարձրացում կը ծանուցանեն Հնդիկի վրայ։

ՍՓԱՐՄԱՋԷԹ.—Եկաւ, 1,500 սնտուկ։ Վաճառմունք, 500 սնտուկ։ Սթոք, 5,000 սնտուկ։ Անշարժ, բայց գիներն ամուր։

ԲԷԹՐՕԼ.—Եկաւ, 25,000 սնտուկ երկու առագաստանաւերով։ Վաճառմունք, 500 սնտուկ։ Ա[illegible] վիճակի մէջ է։

Ընթացիկ գիներ

Շաքար Հոլ. ակռով. կենդ.	220	Լ. 103
» » պարկով »	220	
» Թրիէստ » »	208—216	
» Գլուխ 2—3 քիլօկր. (7 0/0 զեղչ)		
50 քիլօկ.	255	Լ. 100
Խահվէ Բրազիլ ընտ. հօխ.	9	
» » լաւ »	—	
» » սովորկն »	6 1/2	
Սըրմէշէթ Պէլճիոյ քիւ.	6 1/2—6 3/4	
» Ֆրանսայի սնտ.	86	
Լեղակ (չիվիտ) Պէնկ. հօխ	95—130	
Որդան կարմիր (գըրմըզ), սև »	42—46	
» » գորշ »	43—46	
Պղպեղ սև հօխ.	9 1/4—9 3/4	Լ. 104
Կինամոն »	8 1/2—9	» 100
Խունկ կենդ.	240—300	մէճ. 20 ղրշ
Մեխակ (գրնֆիլ) հօխ.	21—23	Լ. 100
Բրինձ Հնդկ. պարկ 80 օխա	133—136	
» Ճէնովա	37 1/2—43	Ֆր.
Թէյ սև սովոր. հօխա	16—17	Լ. 100
» միջին »	40—45	
» ընտիր »	100—120	
Բէթրօլ (կազ) Ամերիկա սնտ.	43—45	
Օլայ (նիշեթա) Անգլ. սնտ.	195	մէճ. 20 ղրշ

ՄԵՏԱՂՔ

Երկաթ. — Գիներն անփոփոխ են յԱնգլիա, և հոս ալ քիչ փոփոխութիւն եղաւ։ Ձմեռն եկած լինելով, ընդհանրապէս երկաթի առուտուրն առջի փայլը չունի։ Սթոքի տեսակներն աղէկ չեն։ Շաբթուս մէջ վաճառուածն է իբր 100 թոնոյ։ Երկու շոգենաւք 250 թոնոյ բան բերին։

Պողպատ.—Գիներն ամուր վիճակ մը ստացած են այն հրապարակաց վրայ, ուր կը պատրաստուի պողպատ։

Ցինկօ.—Շատ կ'ուզուի և գինը կը բարձրանայ, մանաւանդ թէ արդէն մեծապէս բարձրացած է Եւրոպիոյ հրապարակաց վրայ։

Ֆրանսական թիթեղ—Իբր 1000 տակառ (վարիլ) եկաւ Մարսիլեայէն անցեալ շաբթու։ Գիները տկար են։

Անագ.—Եւրոպիոյ հրապարակները շատ բանուկ են։

Օրուան գիներ

Երկաթ Անգլ. ձող կենդ.	45 1/2	Լ. 100
» » ծրար »	44	»
» Շուէտ ձող »	77—80	»
» » ծրար »	82	»
» տախտակ Նօ. 1—4 »	65	»
» » » 5—10 »	75	»
» » » 11—14 »	85	»
» շրջնկ. (մատ 1—3) »	62	»
» թել 3—16 1/2 »	69—71	»
Քարփիցա Փարիզի 15/48 տկռ.	70—72	»
Պողպատ (չէլիկ) ըստ տես. սնտ.	125—	»
Անագ (գալայ) կենդ.	740—750	»
Թիթեղ (թենեքէ) 2 սնտուկ	178—182	»
Կապար, ըստ տես. կենդ.	119, 134, 180	»
Պղինձ տախտակ հօխ.	13—13 1/2	»
Ցինկօ թերթ 100 հօխան 78 Ֆր.		»

Սոյն գիներ կանխիկ առուտուրի համար են.

ՍՊԻՐԹՈՅ

Նշանաւոր գործեր չեղան այս շաբթու։ Գիներն առջի վիճակի մէջ կը մնան։ Սթոքնիս կ'աւելնայ․ 50 տակառ Ռուսական վաճառուած է, և ունինք 200 տակառ։

Ռուս Ա. տես.	17	հօխ.	Լ. 100
» Բ. »	19	»	»
Թրիէստ	—	»	»
Պէրլին	—	»	»
Ամերիկ. 3/6	18	»	»

ՌՈՒՄ

Չեկաւ։ Հրապարակի վիճակն անփոփոխ։

Թրիէստ	15 1/2—16	կալ.	Լ. 100
Ամերիկ.	—	»	»
Անգլ.	9	»	»

ՀԱՆՔԱԾՈՒԽ

Տկար և թոյլ վիճակի մէջ է միշտ։ Քարտիֆ և Լիվրբուլ թեթևապէս բարձրացան այս շաբթու, փոխադրական ծախուց աւելնալուն պատճառաւ։ Եկաւ 3,200 թոնոյ Քարտիֆ։ Սթոքնիս՝ իբր 27,000 թոնոյ, ամեն տեսակէ։

Օրուան գիներ

Ապրանքը գնողին վրայ		թոնոյ
Նիւքասլ նաւուն մէջ	19 շ. 0 բ.	»
» մթերնոցի »	22 շ. 0 բ.	»
Քարտիֆ նաւուն »	22 շ. 6 բ.	»
» մթերնոցի »	25 շ. 0 բ.	»
Համթլփուլ նաւուն »	18 շ. 0 բ.	»
» մթերնոցի »	21 շ. 6 բ.	»
Լիվրբուլ » »	18 շ. 0 բ.	»

ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ

Լևընդ Հէրըլտի երէկուան Առևտրական Տեսութենէն կը քաղենք. — «Հրապարակն առաջուան չափ բանուկ չէ այլ ևս։ — 2 շոգենաւք բերին ամեն տեսակէ 920 հակ Մանիֆաթուրա։ — Պաստա եկաւ 82 հակ և վաճառեցաւ 4,000 կտոր։ Մանածը միշտ կը բարձրանայ ի Մանչէսդըր։ Մեր հրապարակ թոյլ է սակայն, և գործեր սահմանափակ։ Բարձրացում մը կ'սպասուի։ Շաբթուս մէջ վաճառեցաւ 4,200 ծրար․ և եկաւ 310 կապոց։ — Պարսկաստանէն ընդարձակ հրամաններ եկան Մատամբոյի համար։ — Աստառ շատ կայ, և գիները տկար են։»

ՄԱՆԱԾ

Օրուան գիներ (Լ. 100էն)

Վաթէր	—4/14	Բէքէթը	41—42	ղրշ
»	16/24	»	48—52	»
»	28/32	»	55—59	»
Կապոյտ	20/24	»	69—72 1/2	»
Սպիտակցած	»	»	54—59	»
Կարմիր կեղծ	»	»	66—76	»
» խաս	»	»	85—115	»
» »	4/14	»	75—96	»
Էքսթրա	8/14	»	44—51	»
»	16/24	»	54—59	»
»	28/32	»	71—76	»

Միւս տեսակաց գիներն անփոփոխ են։

ԱՐՄՏԻՔ

Շաբթուս ընթացքին մէջ 140-150 հազար գրիւ ցորեն եկած է ծովու և ցամաքի ճամբաներով։ Սթոք 200 հազար գրիւի չափ կայ։ Առուտուրն հանդարտ է։ Գիներն ըստ տեսակին կէս կամ մէկ ղշ կոտրած են անցեալ շաբթուան վրայ։ Թէ՛ ջաղացքներուն և թէ՛ մթերանոցներուն մէջ 15 հազար պարկի չափ բնիկ և Օզիմ ալիւր պատրաստի կը գտնուի այսօր․ ասոնց գիներն ալ 2 ղշի չափ կոտրած են պարկին։ Օտեսայի ալիւր պատրաստի կայ այսօր մօտ 10 հազար պարկ․ այս վերջնոց գիներն ալ թոյլ են։

Օրուան գիներ		Լ. 100	
Ցորեն կարծր Ազախ. գրիւ	26—29	»	չկայ
» » Իսմայիլ »	26—28	»	»
Կիրքա Ազախ. »	28—30	»	»
» Դանուբ »	28—30	»	»
Կարծր Պալչըք Քիւսթէնճ. »	25—26	»	»
Ռոստոֆ. Ադրիան. »	25—26	»	»
Կակուղ Դանուբ »	29—30	»	
Ռումէլի »	27—29	»	
Եգիպտացորեն Դանուբ »	14—	»	
» Բօթի, Օրտու »	15—	»	
» Ռումէլի »	14—	»	
Գարի Դանուբ »	11—12	»	
» Ռումէլի »	11—12	»	
Վարսակ (եուլաֆ) Անտ. »	8—	»	
» Ռում. »	—	»	չկայ
Հաճար (չավտար) »	18—	»	»

ԱԼԻՒՐ

Օտէսա, Ա. տես. 60 օխ.	140—145	Լ. 100
» Բ. » »	130—134	»
» Գ. » »	120—124	»
» Դ. » »	65—80	»
Օզիմ (Ազիմա) » »	117—120	»
Իպրայիլ 00 1/2 »	125—	»
» 00 »	118—	»
Մարսիլիա Ա. տես. »	96—100	»
Բնիկ (զանազան) »	108—115	»

ՇԱԲԹՈՒՍ ՇՈԳԵՆԱՒՔ

Շաբթուս մէջ 24 շոգենաւք եկան Միջերկրականէն, յորմէ 17 Անգլիական, 1 Ռուսական, 1 Իտալական, 1 Հելլենական, 1 Նորվեկիացի, 1 Ֆրանսական և 1 Պելճիական։ Ասոնցմէ 9ը վաճառք բերած էին մայրաքաղաքս։ Մնացեալք Սև ծով գնացին, այսպէս 3ն Օտէսա, 1 Պաթում, 1 Իպրայիլ, 1 Կալաց, 1 Քիւստէնճէ և 3 Սուլինա։

Ցաւօք սրտի կը յայտարարեմ թէ Բաղիշոյ պէս բազմահայ կեդրոնի մը մէջ՝ այժմ չկայ ո և է Ազգային ընկերութիւն . փոխանակ յառաջդիմելու կը յետադիմէ Բաղիշեցին . — ինչպէս որ մօտ օրերս կազմուած է Հաւատարիմ եղբարց ընկերութիւն (Շիրքէթը ախվանը սատըգ) իսլամ և Քրիստոնեայ անդամներէ խառն, որոց նըպատակն է խնճոյք և արբեցողութիւն . իսկ միակ նպատակակէտ՝ գինեմոլութիւն ու զառանցանք, իրենց հետեւանքներով ։

Ինչպէս Հայաստանի ուրիշ քաղաքներ, նոյնպէս և տեղս նպարավաճառութիւնը Թուրքաց ձեռքն է ընդհանրապէս, զի այդ առեւտուրի բնութիւնը զայդ կը պահանջէ . Բաղիշոյ մէջ շուրջ 300 խանութ նպարավաճառ կայ, որոցմէ 4 ատորիները միայն Հայ են . բայց այս վերջիններէն երկուքի խանութը, 6 ամսուայ միջոցի մէջ, 2 անգամ՝ գող կը մտնէ, որով իրենց խանութները գոցելու ստիպեալ դժբաղդութեան մատնուած են այժմ ։

Երբ «Միացեալ ընկերութեանց» այժմու դրամական տագնապի առաջն առնելու համար կեդրոնի մէջ եղած խնայողական մեծամեծ ջանքերն լրագրաց մէջ կ'իմանայ մարդ, շատ մեծ կ'ըլլայ իր զարմանքն, տեսնելով որ նոյն ընկերութեան գաւառական գործոց մէջ՝ շռայլութիւն կը լինի, գուցէ անգիտութեամբ . ի մասնաւորի, յիշեմ տեղւոյս ընկերական դպրոցի մի դասատուն, որ 7 լիրա ամսական կ'առնու և գիտէ կարկտուն Գաղղիերէն մը, քիչ մը տոմարակալութիւն, թուաբանութիւնն խիստ անձուկ սահմանի մէջ, իսկ Հայերէնը ամենևին ոչ-գոհացուցիչ (*) ։

Քաղաքիս մերձակայ գիւղօրէից այս տարուայ հնձոց տասանորդներն՝ որ տէրութեան պաշտօնէից ձեռամբ հաւաքուելով մէն մի գիւղի մէջ համբարուած էր, իսկական արժողութենէն չափին մի քանի ղրուշ վեր գնով մըբռնի գիւղացւոց վրայ բաժնուեցաւ մօտերս և սաստիկ կ'ուզուի . մինչդեռ գիւղացիք՝ իրենց ծախելու ցորեն ունէին ու չէր ծախուէր ։ Սակայն, Բաղիշոյ գիւղացի Հայուն համար ասոնք հասարակ բաներ են ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

—o—

ՄԷՏԷՕՐԱ

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԳԻՏԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Հրատարակուեցաւ Գ. հատորն, որոյ պարունակութիւնն է .

Խուզարկութիւն Հայ լեզուի կազմութեան վրայ, գործ Ք. Պատկանեանի, թարգմանութիւն Գ. Մսերեանի .

Վիկտոր Հիւկօ և Լիլ Լիդբէ .

Վարդապետութիւն Իրականին . —Ի՞նչ է ընկերբաշխութիւնը .

Բաղդ, բանաստեղծութիւն Ռոֆֆէի .

Ֆաուստ կէօթէի, թարգմ. Մ. Նուպարեան .

Լոյս հանդիսին պատասխան .

Հրամանատարիս մենամարտը, փոքր վէպ, Ալպէր Տելբիթէ .

փուլճ, Սէր, կանայք և ամուսնութիւն . Ազատ թարգմանութիւն Պ. Սրպել .

Վարդի վէպ, բանաստեղծութիւն Խաչատուր Պաղտասարեանի .

ՍԱՐԳԻՍ ՇԱՄԼԵԱՆ

—

ԱՌԱԾՔ
ԿԱՐՈԼՈՍԻ ՄՈՆԹԵՎԵՔԻԱՅԻՈՅ

Ընտիր թղթի վերայ մաքուր տըպագրութեամբ գեղեցիկ առածներ են, զորս քաղած է հեղինակը, կարոլոսի վիպասանութենէն . Նիւթիւն ընտրութեանը մասին արդարև գովելի է ամեն հասակի անձանց, մանաւանդ վարժարանաց մէջ և նոր տարւոյ համար աշակերտաց ընծայ կրնայ տրուիլ . գինն է 3 դահեկան դիւրամատչելի . կը գտնուի Գաֆաֆեան, Աշճեան և Մարգարեան գրավաճառատուններըը ։

ՀԱՏՈՒԱԾՔ Ի Ս. ԳՐՈՑ
Ս. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

Սոյն գրքոյկը՝ որ կը պարունակէ Ս. Գրոց գեղեցիկ հատուածներ, նպատակ ունի Հայ մանկտւոյն սրտին մէջ սերմանել հաւատոյ և բարոյականի արդիւնաբեր հունձքերը, կաղանդի առթիւ խիստ յարմար է նուիրելու մանկանց, մանաւանդ հայերէն լեզուի ուսուցման կը նպաստէ, որով կրնայ մուտ գտնել ազգային վարժարանաց մէջ ։

Կը գտնուի բոլոր հայ գրավաճառաց քով, ի գին 100 փարա ։

ԿՐԹԱՐԱՆ
ՀԱՅԵՐԷՆ ԳԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ

Յօրինեաց Փորագրիչ Վահան Թէլլալեան

Վաւերացեալ ի Կրթական տեսչութենէ Ազգ. Կեդր. Վարչութեան և հրամանաւ ժողովոյ Պաշտ. Հաս. Կրթ.

Կեդրոնատեղին է Ուզուն չարշի թիւ 376 վահան Թէլլալեանի գործատունը ։ Նոյնպէս ամեն գրավաճառաց քովն ալ կը ծախուի . ի գին 20 փարայ ։ Շատ գնողներու մասնաւոր զեղչ մը կ'ըլլայ ։

“ԷՍՐԱՐԸ ՓԱՐԻԶ”

Մանզումէի Էֆքեար լրագրոյ խմբագրապետ Փանոսեան էֆէնտի այս օրերս սկսած է թերթ առ թերթ հայատառ թուրքերէնի թարգմանել Ֆրանսացի հռչակաւոր Էօժէն Սիւի “Գաղտնիք Փարիզու” (Էսրարը Փարիզ) գեղեցիկ և հետաքրքրական գործը ։ Մէն մի թերթ 20 փարայի կը վաճառուի, մասնաւորապէս ի գործարանի Ջարդարեան ։ Պայման նշանակած է Փանոսեան էֆէնտի, թէ երբ օրը 500 օրինակ վաճառուի՝ թերթերուն վըրայէն 100 հատ ֆօֆօ բերողին պիտի տրուի պարգևի տոմս մը, և վիճակահանութիւն կատարուելով, տոմսերէն մէկը 10 լիրա, և 5 տոմսակ մէկ մէկ լիրա պարգև պիտի ստանան ։ Կը հրաւիրուի գնել այս դիւրագնի թերթերըն, զբօսնուլ և օգտիլ, և միանգամայն խրախուսել մեր պաշտօնակից թարգմանիչն ։

Ա.
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ
ՈՐ ՅԱՍՊԱՀԱՆ

Աշխատասիրեալ ի Պ. Յարութիւնէ Թ. Տէր Յովհանեանց Ջուղայեցւոյ Աւենադպրէ Ամենափրկչեան վանաց հանգուցելոյ այժմ, և տպագրեալ ի տպարանի նոյն մեծահռչակ վանաց ։

—

Երկու ութածալ հատոր, որոյ մէջ ընդարձակօրէն պատմուած են Ջուղայի Հայ ժողովրդեան Հայաստանէն գաղթումը Պարսից Շահաբաս թագաւորին օրով, և անտի մինչև մինչեւ Ներկայ Նասրէտտին շահին օրով անցած բոլոր քաղաքական և ազգային անցքերն, որք ամենակարեւոր մաս մը կը կազմեն վերջին դարերու պատմութեան, և երբ այն արժանի են ամեն Հայ բանասիրաց տեղեկութեան ։

Բ.
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Հանգուցեալ Ս. Թադէոս Արք եպիսկոպոսի Բեկնազարեան բարեյիշատակ առաջնորդի Ամենափրկչեան սրբոյ վանաց Նոր Ջուղայու

ԵՒ

ՔԵՐԹՈՒԱԾ
Ի ՄԱՀ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹԵԱՆ

Աշխատասիրեալ ի Պ. Յարութիւնէ Թ. Տ. Յովհանեանց Նոր Ջուղայեցւոյ և տպագրեալ ի տպարանի նոյն վանաց ։

—

Նոյնպէս ութածալ հատոր մը որ յու երկհատոր պատմութեան հետ կը վաճառի, երեքին մէկէն գինը կէս Օսմ. լիրա ։

Փափաքողք կրնան դիմել առ խմբագրապետն Մասիսի և նորա ձեռօք բերել տալ Նոր Ջուղայէն այս կարևոր հրատարակութիւններն ։

ԱԶԴ

Հայազգի մի պանդուխտ երիտասարդ՝ կը փափաքի տան մը մէջ Հայերէն լեզուն դասախօսել, նոր սկսողաց համար ալ Գաղղիերէն . կընդունի նաև մի բժշկի կամ մի վաճառականի քով աշակերտել, պէտք ունեցողը Մասիսի գրասենեակէն կրնայ տեղեկանալ յիշեալի տեղը, գիտնալով միանգամայն որ սոյն տարաբաղդ չունի ոչ հայր և ոչ մայր, և թոշակի մասին խստապահանջ չէ ։

ՏԷՄԻՐԳԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԲԱՐՑ
ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Ի Պօլիս Պալըք Բազար 165

Պատիւ ունիմք ծանուցանել մայրաքաղաքիս և գաւառաց ժողովրդեան թէ՝ մեր ծխախոտի Պոլսոյ գործարանն և վաճառատունն այժմ փոխադրած եմք ի Պալըքբազար թիւ 165 Եաղճըլար փողոցի դէմ ։

Մեր ծխախոտներն, որ արդէն մեծ ընդունելութիւն գտած են ամեն տեղ, այս առթիւ գոհողութիւն չպիտի խնայեմք տեսակներն աւելի ևս ազնուացնելու և գիներն միշտ չափաւոր պահելու, որոց ստուգութեանը փորձով պիտի վկայեն ազնիւ յաճախորդք և յանձնարարողք ։

ՏԷՄԻՐԳԱՓՈՒԼԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԿՈՒԶԷ՞Ք ՃԱՇԱԿԵԼ ԸՆՏԻՐ ԵՒ ՃՇՄԱՐԻՏ ՀԻՆ
ՔՈՆԵԱՔ

Գնեցէք միշտ այն որ կը վաճառէ

Շ. ՊԱԺԻԷ ԵՒ ԸՆԿ.

ՔՈՆԵԱՔԻ

Մեծահամբաւ վաճառատունը

Եւ որ կը գտնուի գինիի և ըմպելեաց գլխաւոր վաճառականներու, ինչպէս նաև գլխաւոր նըպարավաճառաց, ճաշարանաց և օթևանաց մէջ ։

Թուրքիոյ համար միակ գործակալն են Զէրվաթի և Ֆացէա ընկերք, Ղալաթիա, Ատա խան ։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ
Կ. ՊՈԼԻՍ ՃԷԼԱԼ ՊԷՅ ԽԱՆ

“Կատարելութիւն”։

ՄԸՍԸՍ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

Աշխարհահռչակ Մազ Նորոգողը

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Երբէք չվրիպիր նորոգելու Ալեւոր Մազը իր երիտասարդական գոյնին, ընծայելով անոր նոր կեանք, աճում, և փայլուն գեղեցկութիւն ։ Իր արդիւնքը ստոյգ և կատարեալ է, շուտով վանելով ալևորութիւնը ։ Ներկ մը չէ ։

Միշտ կը հաստատէ ինքնին իբր մազին բնական զօրացուցիչը ։

[illegible] միայն Կարմրագոյն փաթոյթներուն մէջն է ։

Գլխաւոր Մթերանոցը (Մաղազան) է,—
114 AND 116 SOUTHAMPTON ROW, Լոնտոն, Անգղիա ։

Կը ծախուի ամեն Կեղծամավաճառներէն, Անուշահոտ Իւղավաճառներէն, և Անգղիացի Դեղավաճառներէն ։

Կ. Պոլիս Ս. Քանդիլ եղբարց քով, Ֆարմասի Պրիթանիք Բերա Մեծ փողոց և Էտմընտ Քարլիէնայի քով, Անգլիական մթերանոց, Նիւքաէք Գալաթըրըմ Ղալաթիա ։

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի՝ բաց 'ի կիրակի և տօն օրերէ ։

Բաժանորդագրութեան տեղն է Կ. Պոլիս, Պահչէ-Գափու Ճէլալ պէյ խան թիւ 31 Մասիսի խմբագրատունը ։ Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց գրասենեակները .

ԿԱՐԻՆ Յօհաննէս էֆ. Տ. Մելքիսեդեկեան .
ԵՐԶՆԿԱ . Յ. Շաւարշ էֆ.
ՍԵԲԱՍՏԻԱ. Երանոս էֆ. Սթամպոլեան .
ՍԱՄՍՈՒՆ . Եդուարդ էֆ. Մուրատեան
ԿԻՐԱՍՈՒՆ . Գ. էֆ. Խ. Մայմանեան .
ՌՈՏՈՍԹՕ . Արժ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէսլեան .
ԶՄԻՒՌՆԻԱ . Աբրահամ էֆ. Պէրգամալեան ,
ՆԻԿՈՄԻԴԻԱ Խոսրով էֆ. Էսկիճեան .
ՏՐԱՊԻԶՈՆ . Ս. Էթմէքճեան էֆ.
ԵՒԴՈԿԻԱ. Գէորգ էֆ. Նազարեան.
ՔԱՐԲԵՐԴ և ՏԷՐՍԻՄ . Կիրակոս էֆ. Ն. Ղազանճեան .
ՄՈՒՇ. Արմենակ էֆ. Խանազատեանց.
ՎԱՆ . Պետրոս » Գաբամաճեան.
ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խարաճեան .
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թովմաս էֆ. Թաշճեան.
ԵԴԵՍԻԱ. Գէորգ էֆ. Կ. Ոսկերչեան
ՖՕՔՇԱՆ. Ֆէրհատ » Ս. Ֆէրհատեան.
ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան.
ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս էֆ. Հէքիմեան ։

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITICH AND MERCANTILE
Insurance company

ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԸՐՔԸՆԹԷՅԼ

Լոնտրայի և Էտինպուրկի ապահովութեան ընկերութիւն

	Անգլ. Լիր.
Բաժանորդագրեալ դրամագլուխ	2,000,000
Վճարեալ դրմգլուխ	450,000
Պահեստի դրամ հըրդեհի ճիւղէն գոյացեալ	1,156,690–1,606,690
1878ին զուտ հասոյթը	976,119

NORTHERN
Assurance company

ՆՈՐԹՀԸՐՆ

Լոնտրայի և Էպէրտինի ապահովութեան ընկերութիւն

	Անգլ. Լիր.
Բաժանորդագրեալ դրամագլուխ	3,000,000
Վճարեալ դրմգլուխ	150 000
Պահեստի դրամ հըրդեհի ճիւղէն գոյացեալ	380,000–530,000
Զուտ հասոյթ 1878ի	351,000

Սորագրեալք իրենց բազմաթիւ յաճախորդաց և այս քաղաքիս ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն թէ իրենք վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուին, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանեն ։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն՝ Ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բըռնողներու ինքզինք ներկայացնել ։

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունուիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները ։

MARITIME
Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ
Ծովային ապահովութեան ընկերութիւն
Դրամագլուխ 500,000 Անգլ. լիրա

Սորագրեալք, շոգենաւերը, առագաստանաւերն և անոնց մէջի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած են ընկերութեան կողմէ ։

Գիներուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուզողք պէտք է դիմեն Ղալաթիա Ք. միսիօն խանի անկիւնը՝ երկաթէ կամուրջին վրայ նայող սենեակն առ

և Տնօրէն ամեն գործառնութեանց — Գործակատարն յիշեալ Ընկերութեանց
ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ — ՃՕՀՆ ՐԱՈՒԼ

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա 1 դեկտ.

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ
(Օսմ. ոսկին 100 ղրուշի հաշուով)

Լոնտրա 3 ամիս, ղրշ 110 37 1/2 առ Անգլ. լիր
փարիզ 3 » Ֆր. 25.2 1/2 առ — Օսմ. լիր

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմ. Քօնս. գոցուեցաւ		15.15
բացուեցաւ		15.11
կէս օրին		15.15
		Անգլ. լիր
Սօսիէթէ ժէնէրալ 6 0/0		4.10
» Օթօման		5.20
Կ. Պոլսոյ Պանքան		11.—
Քրէտի ժէնէրալ 6 0/0	Օսմ. լիր	7.—
փոխ. 1863 (Մուլթոն) 6 0/0	Ֆր.	90.
» 1865 » 6 0/0		81.
» 1869 (Բինար) 6 0/0		76.
» 1872 (պօն տիւ թրէզօր)		26.25
» 1873 (Բինար) 6 0/0		71.
Բումէլիի երկաթուղի		57.—
Լաւրիում		148.
Թրամուէյ	Օսմ. լիր	370.
Թղթադրամ	»	930
Չէվալէսիգ		
Տէբօր	——	—

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ
(Օսմ. ոսկին 100 ղրշէն)

	Ղրշ.
Անգղիական ոսկի	110 3
Գաղղիական »	87 35
Բօլ	89 32
Գրիմից	51 30
Գոռպին թուղթ 8 րալի 60 գրէք	
» արծաթ (Նոր)	90 30
Մէճիտիէի տարբերութիւն	7 32
Վեցնոց	126
Հինգնոց	209 30
Հինգնոց (անկէտ)	188
Մէթալիք	205
Պղինձ	610

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտրա 12 դեկտ.

Անգլ. Քօնս.	99 7/16
Օսմ. »	14
փոխ. 1865	17
» 1869	15 5/8
» 1871	73
» 1872	27
» 1873	14 1/2
» 1877	37 1/4
Պանք Օթօման	20 5/8
Ռուս. փոխ. 73ի	87 3/4
Եգիպտ. միացեալ	72 1/8
» արտօնեալ	93 1/8
Տայր Սանիէ	73
փոխ. Ռուսիոյ	92 3/4
փոխանակագիր փարիզի վրայ	

——

փարիզ 12 դեկտ.

Գաղղ. Քօնս. 3 0/0	115.75
» » 5 0/0	85.82 1/2
Օսմ. Քօնս.	14.20
փոխ. 1865 Ֆր.	38
» 1869	78
» 1873	72
Օսմ. Երկաթուղի	58 75
Պանք Օթօման	767.50
Քրէտի Լիոնէ	885
Ռուս. փոխ. 5 0/0 (1877)	93
» » Արևելեան	59 75
Իտալ. Քօնս.	90 80
Եգիպտ. միացեալ	365
փոխանակագիր Լոնտ. վրայ	25 25

——

Վիէննա 12 դեկտ.

փոխ. Լոնտրայի վրայ	119.05
Բուլէմիի երկաթուղի	26,

——

(*) . —Մինչև որ լիովին ապացուցուի թէ նամակագրին այս մասնաւոր գանգատն իրաւացի է, մեք կը սիրենք ենթադրել թէ ընկերութիւնը Կ. Պոլսէն ղրկած դասատուաց վճարն գիտնալու մասին աւելի ձեռնհաս է, քան թէ ո՛ և է գաւառական թղթակից ։ Տ. Խ.